

4.) 600 ռուբ. ուղարկուած է Նախիջևանի յաջորդ տ. Լևոն Վարդապետին՝ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ամենից աւելի վնասուած շրջակայ հայ գիւղերին նպաստ տալու համար:

5.) 800 ռուբ. Էջմիածնի գաւառի Դոյթուր գիւղի 29 հայ ընտանիքներին, որոնց տնտեսութիւնը միանգամայն քայքայուելէ անցեալ ամառ տեղի ունեցած ընդհարման ժամանակ, եւ 6.) 1000 ռուբ. յատկացուած է Ապարանի որակէ գիւղում, ըստ որոշման իրենց ապարանցոց, մի գլորոցական շէնք կառուցանելու:

Զբօսանք կազմողները իրենց անկեղծ շնորհակալութիւնն են յայտնում այն բոլոր բարեգործ անձանց, որոնք իրենց առատ նուէրներով աջակցեցին այդ ձեռնարկութեան յաջողութեան:

Նահապետ Սպիսկոպոս, Սկատերիմո Ֆրէնկէլ, Յ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆՐ

—Մեծարգոյ պարոններ՝ եղբարք Խրիստափօր, Աղէքսանդր (ինժ.), Միքայէլ և Գրիգոր Բաղդ. Նաղարեանները իրանց հանգուցեալ մօր՝ Զամախայ քաղաքացուի Թադուհի Սարգսեան Նաղարեանցի մահուան տարեկիցի առիթով հոգեհացի փոխարէն թերթիս խմբագրին յանձնեցին յիսուն ռուբլի յօգուտ Զուշուայ հայ արկածնախնդրի, որպիսի դուամբը խմբագրութիւն ներկայացրեց թմբիս սրբազան Առաջնորդին գործադրելու յիշեալ նպատակի համար:

—Ս. Էջմիածնում արդէն կառացուած է ելեքտրական կայարան և Մայր Աթոռի մօտին հաստատութիւններ հոկտեմբերից կլուսաւորուին ելեքտրական լուսատուութեամբ:

—Մեզ ուղարկուած է պ. Վարդան Վարդանեանի հրատարակած «Ոգի հայտնանի»-ի գունատիպ ութորը ձեռագործի համար, մի շքեղ հրատարակութիւն, կարեւոր մօտն մի ընտանիքի համար: Գինն է 5 ռ:

—Ս. Էջմիածնի միաբաններից Արսէն վարդ. Ղաճեան, Գոստանդին, Սըմբատ և Գօղոս սարկաւազները՝ կուսակցութիւնը թողնելով վերադարձան աշխարհական կոչման:

—Օգոստոսի 16-ին ս. Էջմիածնում բացուեցաւ Ռուսահայերի կենդրոնական ժողովը, և մի քանի նիստերից յետոյ փակուեցաւ փոխաբքայի հրամանով:

—Մեզ հաղորդում են, որ մեր երկու նշանաւոր հոգեւոր Գլորացիներում, այն է ս. Էջմիածնի ձեռնարանում և Ներսիսեան Գլորացում, որոնցից գլխաւորապէս հայ եկեղեցին ստանում է իւր հոգեւոր հովիւները, ներկայումս վերացրուած է կրօնական առարկաների դասատուութիւնը և մնացել է կրօնի ուսուցման միայն աննշան հետքը:

† Հոկտ. ամսին հայ հասարակութիւնը երկու նշանաւոր կորուստ ունեցաւ. Ն. Նախիջևանում վախճանուեց Նահապետ եպիսկոպոսը, Ռուսաստանի Հայ եկեղեցու նշանաւոր դէմքերից մէկը. և Խարկովում՝ ինժ. Նիկողայոս Գրիգորեանը, Թիֆլիսի հայ հասարակութեան նշանաւոր գործիչներից մէկը (զոհ կուսակցական անխիղճ հալածանքի): Այդ երկուսի յիշատակին կնուիրենք «Լուսմայի» առաջիկայ համարը:

„**ԼՈՒՄԱՅ**“
ԱՄՍԱԳԻՐԸ 1907 թ ՌԻԻՆ
 (XII-Դ ՏԱՐԻ)

Այս համարով փակւում է «Լումայի» 11-րդ տարին և մենք հարկաւոր ենք համարում ընթերցողների առաջ բանալ այն բոլոր հանգամանքները, որոնք պատճառ են դառել «Լումայի» անկանոն հրատարակութեան վերջին տմիսներում:

«Լուման» լոյս չի տեսել 1906 թուի II կիսամեակից մինչև ալժմ նախ և առաջ խմբադրի տկարութեան և ապա նիւթահան միջոցների պակասութեան պատճառով:

Տասնևմէկ տարուայ ընթացքում մենք ունեցել ենք խոշոր դիֆիցիտ, որ հասնում է մի քանի հազար ռուբլու: Բացի դրանից ղեռ անցեալ և այս տարուայ բաժանորդներից շատ շատերը չեն վճարել իրենց բաժանորդագիրը, մի կողմ թողնելով այն ինքնակոչ անձանց, որոնք, առանց խմբադրութեան առաջարկի, ժողովել են մեծ թուով բաժանորդներ և մինչև այսօր չեն հասցրել մեզ բաժնէկները:

Այս ամենը ի նկատի ունենալով՝ իսկապէս «Լուման» պէտք է դադարեցնէր իւր գոյութիւնը, բայց «Լումայի» համակրողների բուռն ջանկութիւնը կատարած լինելու համար, որ արտապայտուած է մեզ ուղղուած բաղձաթիւ նամակներում, որոշեցինք շարունակել նորա հրատարակութիւնը նաև 1907 թուին, յոյս տածելով, թէ հայ հասարակութիւնը թոյլ չի տալ, որ դադարէ մի ամսադիր, որի անցեալը ինքը խօսում է իւր մասին:

Խմբադրութիւնն իւր կողմից դործ է դնում ամեն միջոց «Լումայի» կանոնաւոր հրատարակութեան համար. իսկ բաժնէկինք ընթերցողների աւելի լայն շրջանին մատչելի անելու համար՝ բոլոր ուսուցիչների, քահանաների, աշակերտների և դործակատարների համար՝ որոշել ենք 8 ռուբլուց իջեցնել 6 ռուբ.

1907 թուին առանձին՝ ուշադրութիւն կդարձնուի բացի բովանդակութիւնից նաև «Լումայի» արտաքինի վերայ, կը սրւպադրուի նոր տպարանում տպագրական բոլորովին նոր պատգաններով:

1906 թուի այն բաժանորդներին բաւականութիւն տուած լինելու համար, որոնք արդէն վճարել են իրենց բաժնէկները, մենք կտանք 1907 թուի 1—4 համարները, իսկ որոնք կուզենան շարունակել ստանալ ամսադիրը՝ և՛ այնուհետեւ՝ պէտք է վճարեն 6 ռուբլի:

Մնացեալ բոլոր բաժանորդների համար «Լուման» կարժէնայ տարին 8 ռուբլի: Արտատպման 10 ռուբլի:

Խմբագիր հրատարակիչ Գիւտ ար. Աղանեանց
 Հասցէն՝ Тифлисъ, Редакция „Лума“.